ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 136-Ա « 16 » փետրվարի 2026թ.

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/33» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության կողմից ներկայացված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի թիվ 164 մանկապարտեզի բակի բարեկարգման աշխատանքների գնման հայտը.

1.Ձևավորել «ԵՔ-ԲՄԱՇՁԲ-26/33 ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը.

Գ. Գրիգորյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետի տեղակալ /հանձնաժողովի նախագահ/
Գ. Ութունջյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական օբյեկտների ծրագրի պատասխանատու ինժեներ
Հ. Գյուրջյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության շինարարական ծրագրերի կառավարման բաժնի պետ
Ա. Գրիգորյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության մոնիտորինգի և վերլուծությունների խմբի մասնագետ
Լ. Զաքարյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության մոնիտորինգի և վերլուծությունների խմբի մասնագետ

2. Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության աշխատանքների գնումների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Վ. Մեժունցին:

3. Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել սույն կարգադրությունը ուժի մեջ մտնելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա

ընթացքում, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում (ք. Երևան, Արգիշտիի հ.1, հ.120 սենյակ):

4. Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

6. Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ